

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԴԱՐՅԱՆՑԸ ԵՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Հովսեփ Արղության, Գրիգոր Խալդարյան, Մարգար Երևանցի, Մարուքյան, հրատարակչություն, տպարան, գաղութ, Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան:

Keywords: Hovsep Arghutyan, Grigory Khaldaryan, Margar Yerevantsi, Maruqyan, publishing house, printing house, colony, Peterburg, Nor Nakhichevan, Astrakhan.

Սույն հոդվածի **գիտական** կարևորությունը, **ճանաչողական** նշանակությունն ու **արդիականությունը** պայմանավորված է հայագիտական հիմնահարցերի դիտարկմամբ և ուսումնասիրությամբ, ինչպես նաև սփյուռքի գաղթօջախներում ծավալվող կրթամշակութային ու գրատպության գործունեությունն օրյելտիվ և փաստացի ներկայացնելն ու հանրայնացնելը հատկապես այսօր խիստ անհրաժեշտ է:

Հոդվածի **նպատակը** պայմանավորված է հայ գրքագիտության և տպագրության վերաբերյալ արդի գիտության պահանջով: Ռուսաստանում 18-19-րդ դարերիի հայկական տպագրության պատմական և փաստատեղեկատվական դերի հետազոտումը հայ գրքի և տպագրության պատմության կարևոր և անհրաժեշտ հարցերից մեկն է ժամանակակից հայ գրքի և տպագրության տեսության համատեքստում: Այստեղից էլ հետևում է նրա հետազոտման անհրաժեշտությունը. անհրաժեշտ է ներկայացնել ռուսահայ տպագրության կատարած դերը, տեղեկատվական, պատմական, կրթական, մշակութային նշանակությունը ու վերլուծել նրա զարգացման ուղիները, տարբեր տեսանկյուններով բնութագրել ռուսահայ տպագրությանն առնչվող պատմական, աղբյուրագիտական, բանասիրական, գրքագիտական, մատենագիտական ուսումնասիրությունները:

Հայ ժողովրդի կյանքը այնպես է դասավորվել, որ անկախ իրենց կամքից սկսել են աշխատել, ստեղծագործել իրենց հայրենիքի սահմաններից դուրս: Ստեղծել են մշակութային օջախներ՝ կրթության, գիտության, արվեստի, գրատպության կենտրոններ: Այդ օջախներից յուրաքանչյուրի գործունեությունը նպաստել է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ տվյալ երկրի ժողովրդի հասարակական զարգացման գործընթացին: Այդ կենտրոնները նաև աչքի են ընկել իրենց ինքնատիպությամբ և հայ ժողովրդի պատմության կերտման մեջ իրենց դրական դերն են ունեցել: Ռուսաստանը զերծ չի մնացել այդպիսի օջախներ ստեղծելուց: 18-րդ դարը հայ ժողովրդի հաստատվելու ժամանակաշրջանն է Ռուսաստանում: Այդ ժամանակ հոգևորականները մեծ կապեր են ունեցել իշխանավորների հետ և կարողացել են օգնել հայ ժողովրդին:

Հովսեփ արքեպ. Արղությանը լավ գիտակցում էր՝ Ռուսաստանում մշակութային օջախներ ունենալով՝ հայ ժողովուրդը կպահպաներ իր հավատը և չէր գնա միսիոներների հետևից: Նա իր կողքին ուներ Հովհաննես Աղազարի Լազարյանի նման հարուստ հայ և Եկատերինա Բ-ի թույլտվությունը երկրում ստեղծագործելու և կայանալու համար:

Ռուսաստանի հայկական գաղթավայրերում 18-րդ դարի երկրորդ կեսին նախապայմաններ են ստեղծվում հասարակական և մշակութային ակտիվ գործունեության համար: Ստեղծված նախապայմաններից էր հայերի տնտեսական և քաղաքական դերի աճը: Բացվում են հայկական դպրոցներ, տպագրվում են հայերեն գրքեր:

Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում Գրիգոր Խալդարյանի տպարանն է, որը 1780 թ. Լոնդոնից Պետերբուրգ էր բերվել ռուսահայերի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի և բարերար, քաղաքական գործիչ Հովհաննես Աղազարի Լազարյանի հովանավորությամբ: Նրանք նշանավոր հասարակական գործիչներ էին և լավ էին հաս-

կանում ազգային լեզվով հրատարակչությունների նշանակությունը: Նրանք հասկանում էին ինչքան կարևոր է տպարանը մեր լեզվի պահպանության գործում:

Նոր Զուղայի գրասեր և հարուստ վաճառականներից մեկը՝ Գրիգոր Խոջամալի որդի Խալդարյանը [Հայկական սովետական հանրագիտարան, 1974, 705] ծնվել է 1732 թ.: Նա բավական երկար ժամանակ ապրելով Լոնդոնում, այնտեղ մի անգլիացի փորագրիչ վարպետի պատրաստել է տալիս հայերեն նոր տեսակի տպագրական տառեր: Նա թարգմանիչ էր, հրատարակիչ, բառարանագիր: Խալդարյանը փորձել է իրականացնել հայկական տպարան հիմնելու և գրքեր հրատարակելու իր երազանքը: Նա իր տպարանը սկզբից հիմնում է Լոնդոնում և 1780 թվականին հրատարակում է հայ լուսավորչական եկեղեցու մասին մի գիրք «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը [Լևոնյան, 1958, 163]: Սակայն տպարանը Լոնդոնում շատ կարճ կյանք է ունենում և այն տեղափոխվում է Պետերբուրգ:

Խալդարյանի տպարանը, տեղափոխվելով Պետերբուրգ, մեծ դեր է խաղում հայ մշակութային կյանքում: Նրա աջակիցներն էին կինը և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Արղությանը խրախուսում է նրան և խոստանում է ամեն կերպ աջակցել նրա ազգօգուտ գործին: Նա ոչ միայն օժանդակում էր թերի տառերն ու պատկերները լրացնելու, ծախսերը հոգալու գործում, այլև ձեռք է բերում հրատարակության անհրաժեշտ գրքեր, համապատասխան խմբագրման ենթարկում և առաքում Պետերբուրգ: Միաժամանակ Արղությանը իր ընկերների միջոցով գրքերը տարածում էր Ռուսաստանի բոլոր հայաբնակ վայրերում: Անգամ ուղարկում էր երկրից դուրս ապրող հայերին: Ստացված գումարը ուղարկում էր Խալդարյանին՝ տպարանի պետքական ծախսերը հոգալու:

Խալդարյանը նկատելով, որ իր տառերի տեսակները քիչ են, Լոնդոնից հրավիրում է իր ծանոթ փորագրիչ վարպետին և խոշոր տառեր պատրաստելու պատվեր տալիս: Այստեղ տպարանը լույս է ընծայում շուրջ 16 անուն գիրք 9 տարվա ընթացքում:

1. Այբբենարան, 1781
2. Կրթութիւն քրիստոնէական, 1782
3. Ժամագիրք, 1783
4. Ներսէս Շնորհալի: Յիսուս որդի, 1785
5. Չամչեան Միքայել Աբրահամի: Պատմութիւն Սուրբ գրոց, 1785
6. Չամչեան Միքայել Աբրահամի: Պատմութիւն Սուրբ գրոց: Հատոր Բ, 1785
7. Սկզբունք քաղաքական ուսմանց, 1785
8. Աւետարան ճաշու: Տօնացոյց: Երկրորդ հատոր, 1786
9. Իլիա Մինեդիս: Վէմ գայթակղութեան, 1786
10. Ղազար Ջահկէցի: Աստուածադէրս, 1786
11. Ներսէս Շնորհալի: Աղոթք, 1786
12. Տարեցոյց և օրացոյց, 1986
13. Եղիշէ: Պատմութիւն Վարդանանց, 1787
14. Ժամագիրք, 1787
15. Գրիգոր Խալդարեանց, Ներսէս Շնորհալի: Գիրք որ կոչի Շավիղ լեզուագիտութեան, հաւատով խոստովանիմ, 1788
16. Կղեկատրա Սարաֆեան: Բանալի գիտութեան, 1788
17. Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի: Ընդհանրական դրուատ պատմագրաբար, 1788

1783 թվականին տպագրվում է մի ժամագիրք, որի հիշատակարանի մեջ Խալդարյանը պատմում է, թե ինքը վաղուց ցանկություն է ունեցել սեփական տպարան ունենալ: Դա է պատճառը, որ գնացել է Լոնդոն, տասը տարի մնացել, զանազան փորագրիչ վարպետների

դիմել, որ հայերեն տառերի ձուլման կաղապարներ պատրաստեն: Այդ ամենի համար մեծ գումարներ է ծախսել և եկել Պետերբուրգ տպարան հիմնել [Լևոնյան, 1958, 163]:

1785 թ. լույս է տեսնում «Պատմութիւն սուրբ գրոց», նույն թվականին տպագրվում է «Յիսուս որդին»:

1785 թ. Հ. Արղությանը Աստրախանից և Նոր Նախիջևանից ամեն կերպ օգնում և ապահովում է տպարանի անխափան աշխատանքը: Մակայն տպարանի հեռու գտնվելու պատճառով լուրջ դժվարություններ է լինում թե՛ նյութեր պատրաստելու և ուղարկելու մեջ, թե՛ գրքերի իրացնելու գործում: Ահա սա էր պատճառը, որ Արղությանը սկսած 1785 թվականից ամեն կերպ համոզում էր Խալդարյանին տպարանը տեղափոխել Աստրախան կամ Նոր Նախիջևան: 1785 թ. Արղությանը նամակ է գրում Խալդարյանին մի քանի ձեռագրեր առաքելու մասին և հավելում. «Ախ եթե ինձ մերձ լինեիր, շատ ինչ յառաջանալոց էր և վասն անմահ էր մնալոց տպագրատունդ այդ: Բայց զինչ արարից, հեռի էս որպես յինէն, նմանապես և իր բազմութենէ... հայցեմ այնպէս հոգա և կարգաւորեայ վասն տպարանիդ, որ զկնի մահու քոյ և մեր մի խափանեսցի, այլ յաւիտեան յիշատակ մնասցէ անուն քոյ... որ ջանքդ իզուր չլինիցի: Ոհ, թէ մօտանայիր ինձ ասա կամ ի Նախիջևան [Բարխուդարյան, 1967, 220]»: Այսպիսի նամակ մի քանի անգամ է Արղությանը գրել Խալդարյանին: Նա ամեն կերպ համոզում էր տպագրիչին տպարանը տեղափոխելու և խոստանում էր համապատասխան վարպետներով ապահովել տպարանը՝ ավելի լավ աշխատելու: Խոստանում էր, որ տպարանը մինչև մահ կմնար տպագրիչի անվամբ և ոչ մի նեղություն չեն տա նրան: Արղությանը անգամ Խալդարյանի կնոջն է նամակ գրում՝ Կատարինէ Զաքարովնային: 1786 թ. նոյեմբերին Արղությանը նամակով դիմում է կնոջն ազդել ամուսնու վրա՝ տպարանը տեղափոխելու: Նա մանրամասնորեն բացատրում է տեղափոխման կարևորությունը:

Հ. Արղությանը հարավային Ռուսաստանում, որտեղ հայկական գաղթօջախներ կային, տպարան ստեղծելու եռանդուն գործունեություն էր ծավալում: Ահա այս բուռն գործունեության ժամանակ 1787 թ. օգոստոսին մահանում է Գ. Խալդարյանը՝ թողնելով տպարանը պարտքերի մեջ [Բարխուդարյան, 1967, 221]:

Տպագրված բոլոր գրքերը ծառայում էին երկու նպատակի համար. դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ՝ մանուկների համար և ռուսաց լեզուն ուսուցանելու նպատակով, աշխատություններ՝ ուղղված երկու ժողովուրդների պատմությանն ու մշակույթին փոխադարձ ծանոթանալուն: Գ. Խալդարյանի հայ-ռուսերեն բառարանը, որը կրում էր «Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» խորագիրը: 1788 թ. հրատարակվում է Կլեոպատրա Մարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» ուսույց-բառարանը, որը նախատեսված էր և՛ կրթություն ունեցող երեխաների, և՛ բնակչության տարբեր խավերի համար [Բարխուդարյան, 2010, 289]: Նրա գրքում կան գեղեցիկ արտահայտություններ, որոնք մինչև հիմա օգտագործվում են՝ առաջին խոսակցություն՝ первый разговор, հավիտենական կյանք՝ вечная жизнь, երկնային թագավորություն՝ царство небесное և այլն:

Գարեգին Լևոնյանը գրում է. «Ինչպես երևում է, Խալդարյանց պարոն Գրիգորը մի քիչ էլ «գրոց» մարդ է եղել. իր տպագրած գրքերի վերջին երեսներում, երբ ազատ տեղ է մնացել, շարել և տպագրել է տվել անգլերենից թարգմանած իր փոքր աշխատությունները: Այդպիսիներին մենք տեսնում ենք «Սուրբ Գրոց պատմութեան» վերջում, որ «առ ի լնլոյ զպարապ տեղիս եղաք բան ինչ յաղագս իրավանց թարգմանեալ ի Անգլիացոց լեզուէ հայ բարբառ ի պարոն Գրիգորէ Խալդարեանց կոչեցելոյ»: Դարձեալ մի նման գործ մենք տեսնում ենք «Վեմ գայթակղութեան» գրքի վերջում, որ «առ ի լնլոյ զպարապ տեղիս» տպագրված է «Բան ինչ յաղագս նախանձաւորութեան» [Լևոնյան, 1958, 164]:

1788 թ. լույս տեսած գիրքը, որ կոչվում էր «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան», այս ինքնուսույց ձեռնարկը փաստորեն առաջին դասագիրքն էր ռուսահայ գաղթօջախների տարածքում և որպես այդպիսին զգալի դեր կատարեց հայոց լեզուն պահպանելու գործում:

Գրքի լույս ընծայման կապակցությամբ «Մանկտ-Պետերբուրսկիե վեդեմոստի» թերթում նույն թվականին է 1788 թ.-ին տպագրվեց մի հայտարարություն, որով ծանուցում էր, թե Ելիզավետա Սարաֆովան (Մովսես Սարաֆյանի կինը և Մարիամ Կլեոպատրիայի մայրը) վաճառում է մի գիրք, որի արժեքը առանց կազմի 2 ռուբլի է, իսկ կազմով 2 ռուբլի 50 կոպեկ:

Այն ժամանակ տպագրված գրքերի վաճառքը շատ դժվար է եղել: Տպագրված հրատարակությունների տարածումը լավ կազմակերպված չլինելով՝ գրքերը մնացել են տպարանի պահեստներում և գոյացել են ահագին պարտքեր, որոնց տակ ճնշվել է Խալդարյանցը և սկսել է ելք փնտրել ազատվելու: Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանը, տեսնելով այս վիճակը, իր թեմում գտնվող հարուստ անձնավորություններից հանգանակում է 1200 թուման, վճարում հրատարակչության պարտքերը: Նա առաջարկում է հրատարակչին տպարանը տեղափոխել Նոր Նախիջևան, նորակառույց Ս. Խաչ վանքը: Խալդարյանը համաձայնում է և ազատվելով պարտքերից, սկսում է պատրաստվել տեղափոխության: Սակայն մահը վրա է հասնում և միանգամից փակվում է նրա տպարանի հարցը (1787 թ.) [Նույն տեղում]:

Հովսեփ Արդությանի ջանքերով 1790 թվականին Պետերբուրգից Նախիջևանի Սուրբ Խաչ վանք տեղափոխվեց Գ. Խալդարյանի տպարանը: Այստեղ տպարանը գործեց հինգ տարի և այդ քիչ ժամանակում հրատարակեց քսան անուն գիրք: Տպարանը մեծ աշխուժություն մտցրեց Նոր Նախիջևանի մշակութային կյանքում: Այն կարևոր էր ոչ միայն այնտեղի հայերի համար, այլև ամբողջ երկրամասի համար: Տպարանը հարավային Ռուսաստանում առաջինն էր [Բարխուդարյան, 1985, 327]:

Արդությանն այդքան հեշտ չի տեղափոխում տպարանը: Տպարանի համար գումար ձեռք բերելու նպատակով ռուսահայերի հոգևոր առաջնորդը դիմում է նաև իր թեմի գաղթօջախների բնակչությանը: Նախ մեկնում է Աստրախան, ուր ժողովրդի տարբեր խավերը օգնում են գումարով: Նրա պատմելով սկզբից ազնվածին իշխանները, հետո օրինյալ ժողովուրդը: Հետո գնում է Ղզլար, Նոր Նախիջևան, որտեղ հայ ժողովրդի վիճակը չնայած ծանր էր, բայց կարողանում են որոշ դրամագլուխ նվիրաբերել: Արդությանը մեկնում է նաև Սարֆա, որպեսզի դիմի Հովհաննես Լազարյանի հովանավորությանը: Նրան նաև օգնության ձեռք են մեկնում հայ եղբայրներ Մարգար և Փիլիփոս Մարգարյանները:

Արդությանն ուներ մեկ այլ մտահոգություն: Նա լսել էր, որ Հովակիմ Լազարյանը ցանկանում է տպարանը գնել և Թադեոս վարդապետի հետ տեղափոխել Մոսկվա [Բարխուդարյան, 1967, 224]: Ռուսահայ առաջին տպարանի գործունեությունը անքակտելիորեն կապված է կոստանդնուպոլսեցի Թադեոս վարդապետ Մարությանի անվան հետ, որը զբաղվում էր և՛ մանկավարժությամբ, և՛ տպագրական գործով: Նա 1787 թ. Կ. Պոլսից էր հրավիրվել: Մարությանը արքեպիսկոպոսի քարտուղարն էր և հրատարակությունների հրատարակիչ: Ձեռնհաս այլ անձնավորություն չգտնվելով, Արդությանի պահանջով Թադեոս վարդապետը թողնում է Ս. Խաչ վանքի վարժարանը և մեկնում Պետերբուրգ: Այդ ժամանակվանից սկսած նա իր կյանքը անբաժանելիորեն կապում է Խալդարյանի տպարանի հետ, որտեղ խմբագրում և անմիջականորեն գլխավորում էր գրքերի հրատարակումը: Առանց Թ. Մարությանի ժրաջան աշխատանքի դժվար էր պատկերացնել տպարանի աշխատանքը: Այդ պատճառով էլ տպարանի հետ նա Պետերբուրգից գալիս է Նոր Նախիջևան, իսկ հետագայում նրա հետ տեղափոխվում Աստրախան: Պատահական չէր, որ ռուսական բանակի հետ Կովկաս մեկնելուց առաջ Հովհաննես Լազարյանի խորհրդով Հ. Արդությանը հատուկ կտակով տպարանը հանձնում է Թադեոս վարդապետին՝ իր մահվան դեպքում տնօրինությունը նրան անցնելու պայմանով: Մանուկների ուսուցման և թարգմանական հրատարակչական ասպարեզում արգասավոր աշխատանք էր ծավալել Մարգար Խոջենց Երևանցին: Նա Թ. Մարությանի հետ կրում էր հրատարակչական տպագրական գործի ծանրությունը: Եթե Թադեոս վարդապետը անձամբ աշխատում ու վարում էր տպագրական գործը, ապա Մարգար Երևանցին օտար գրականությունից կատարում էր թարգմանություններ, խմբագրում ու հրատարակության պատրաստում

աշխատությունները: Մարգար Երևանցին ժամանակի գրագետ ու գիտուն մարդկանցից էր, ազատորեն տիրապետում էր բազմաթիվ օտար լեզուների և նա Լազարյան ուսումնարանը Նոր Նախիջևանում բացելու մտադրության ջերմ կողմնակիցներից էր:

Արքեպ. Արղությանը, վախենալով տեղի հոգևորականների տգիտությունից և կարճատեսությունից, տպարանը պաշտոնապես դնում է հայկական մագիստրատի տնօրինության տակ: Դրանով ապահովագրում է տպարանի անխափան ու հարատև գոյությունը: Արդեն մնում էր միայն Խալդարյանի կնոջը՝ Կ. Ջաքարովնային համոզել, որ տպարանի տնօրինակները ստանալուց հետո թույլատրեք տպարանը տեղափոխել: 1789 թ. հուլիսի 5-ի Կատարինե Ջաքարովնային գրած իր նամակում նա նշում էր, որ անգամ եթե ինքը մահանա, միևնույն է, այդ գումարը կվճարի Նոր Նախիջևանի մագիստրատը [Բարխուդարյան, 1967, 222]: Ջաքարովնայի նամակին զուգահեռ նա խնդրում է Հովհաննես Լազարյանին, որ կարողանա համոզել Ջաքարովնային՝ թույլ տա Թադեոս վարդապետին տեղափոխել տպարանը Նոր Նախիջևան:

Թադեոս վարդապետը 1790 թ. հունվար ամսին տպարանը հասցնում է Մոսկվա: Ինչպես տեղեկանում ենք Արղությանի օրագրերից, 1789 թ. Պետերբուրգից դուրս բերված տպարանը 1790 թ. հունվարին իրոք եղել է Մոսկվայում և միայն Ս. Խաչի վանքում տպարանի ու դպրոցի կարիքների համար կառուցվող 37 սենյակները ավարտին հասցնելուց հետո է հասել Նոր Նախիջևան [Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳՀ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, 2013, 14]: Արղությանի խորհրդով, գարնան բացվելուն պես և գետերը նավարկելի դառնալուն պես, Թադեոս Մարությանը տպարանը բերում Մակարիա, հետո Դուբովկա, հետո Դուբովկայի և Դոնի միջև ընկած ճանապարհը, սայլով տեղափոխում է և նորից Դոն գետով հասցնում Նոր Նախիջևան: Մինչ տպարանը այդ երկար ճանապարհին էր անցնում, Արղությանը ավարտում է Ս. Խաչ վանքի 37 սենյակների շինությունը, որը հարկավոր էր տպարանի և դպրոցի համար [Բարխուդարյան, 1967, 222]: Տպարանը տեղ հասնելուն պես արդեն հունիս ամսին սկսում է տպագրությունը: Ըստ տպագրված գրքերի քանակի՝ տպարանի ամենաբեղուն տարիները եղել են հենց այստեղ՝ Նոր Նախիջևանում (1790-1795 թթ.): 1790-1795 թթ. տպարանում հրատարակվում է 21 անուն գիրք [Ղազարյան, 2005, 3]:

1. ԱՂԵՔՍԱՆԴԻ ԶՈՒՂԱՅԵՑԻ: ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ: ՍԻՄԷՕՆ ԵՐԵՎԱՆՑԻ: ՋԲՕՍԱՐԱ Ն ՀՈԳԵՒՈՐ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1790:
2. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1790:
3. ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ: ՈՂԲՔ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1790:
4. ԺԱՄԱԳԻՐՔ: ՆՈՐ Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1791:
5. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1791:
6. ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ: ԱՍՏՈՒԱԾԱՂԵՐՍ: Նոր Նախիջևան, Ս. Խաչ վանքի, 1792:
7. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ: ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԶԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅՆ ԱՐԺՄԱՆ Է: Բ մասը չափածո: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
8. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ: ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԶԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅ ՇԱՐԺՄԱՆ Է: Բ մասը չափածո: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
9. ՅՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ: ԴՈՒՌՆ ՈՂՈՐ/ՄՈՒԹԵԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
10. ՏԱՐԵՑՈՅՑ ԵՒ ՕՐԱՅՈՅՑ: ՆՈՐ Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
11. ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ: ԱՍՏՈՒԱԾԱՂԵՐՍ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:
12. ՊԵՏՐՈՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ: ԲԺՇԿԱՐԱՆ ՀԱՄԱՌՕՑ: ԲԱՌԱՐԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:
13. ՏԱՐԵՑՈՅՑ ԵՒ ՕՐԱՅՈՅՑ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:

14. ՖՐԱՆԶԵՍՔՈՅ ՖԵՆԵԼՈՆ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԱՄԱՔԻ ՈՐԴԻՈՅ ՅՈՒԼԻՍ Ի: Հտ. Ա-Բ: Թարգմ.՝ Մարգար Երևանցու: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:
15. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
16. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ: ՀՈԳԵՇԱՀ, Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
17. ՊՕՂՈՍ ՏԻՐԻԿԵՅԻ ԹՈՐՈՍԵԱՆ: ԲԱՌԱՐԱՆ (թուրքիայերեն): Չափածո: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
18. ՄԻՍԷՕՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ԳԻՐՔ ԱՂՕԹԻՅ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
19. ՖՐԱՆԶԵՍՔՈՅ ՖԵՆԵԼՈՆ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԱՄԱՔԻ ՈՐԴԻՈՅ ՅՈՒԼԻՍ Ի: Երկու հատորով: Հտ. Ա: Թարգմ.՝ Մարգար Երևանցու: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
20. ՅՈՎՍԷՓ ԱՐԴՈՒԹԵԱՆՑ: ՔԱՐՈԶ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1795:
21. ՖՐԱՆԶԵՍՔՈՅ ՖԵՆԵԼՈՆ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԱՄԱՔԻ ՈՐԴԻՈՅ ՅՈՒԼԻՍ Ի: Երկու հատորով: Հտ. Բ: Թարգմ.՝ Մարգար Երևանցու: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1795:

Այսպիսով 1790 թվականին սկսում է Խալդարյանի հիմնադրած տպարանի գործունեության երկրորդ շրջանը՝ Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում: Այս տարիներին, ինչպես վերը նշված է, Ռուսաստան է գալիս Մարգար Խոջենց Երևանցին: Վերջինս, Ջյուռնիայում լսելով Հովսեփ Արղության ծավալած մշակութային և լուսավորական շարժման մասին, գալիս է Ռուսաստան և արքեպիսկոպոսին ներկայացնում Ֆրանչեսկո Ֆենելոնի նշանավոր «Տելեմաքի» իր թարգմանությունը՝ շեշտելով, որ ի տարբերություն մյուս ազգերի, հայերը դեռևս չունեն «Տելեմաքի» թարգմանությունը:

1790 թվականին Արղությանի տպարանը հրատարակում է հետևյալ գրքույկները. «Կանոն Սաղմոսաց», «Գանձարան ախտականութեան», «Գիրք որ կոչի Աղոթամատոյց», «Գիրք աղօթից որ կոչի զբոսարան հոգևոր»: Նույն թվականին նորից լույս է տեսնում Ստեփանոս Օրբելյանի «Ողբ և հառաչանք»-ը: Գրքի սկզբում կա Էջմիածնի Կաթողիկե Մայր Տաճարի նկարը, որի տակ գրված է հետևյալ չափածո քառյակը.

«Տաճար լուսակերտ՝ յարկ ապավինի.

Ցատկագոյն պարծա նք Արամեան ազգի.

Ժողովեա՝ առ քեզ ըզմանկունս քո.

Որք ի քէն մեկնեալ կան այժմ արտաքոյ» [Գևորգյան, 1954, 48]:

Գրքում կան նաև հայ թագավորական տների զինանշանների բացատրությունները:

1791 թ. լույս է տեսնում «Կարճառօտ ժամագիրք» և «Սաղմոսարան», որոնք տպագրվում են Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Աղաբաբյան Ստեփանոսի և իր կնոջ Հռիփսիմեի ծախսերով: 1792 թ. լույս է տեսնում «Տետրակ համառօտ և լի իմաստանախոհ բանիւք Յովհաննէս Երզնկացոյ, որ և ասի Ծործորեցի»:

Ջուղայեցի բժիշկ Պետրոս Քալանթարյանի «Բժշկարան համառօտ»-ը, որը լույս է տեսել 1793 թվականին, Արղությանի տպարանի կարևոր հրատարակություններից մեկն է: Այն նորություն էր. բացատրում էր դեղեր պատրաստելու եղանակը: Աշխատությունը բաժանված է երկու մասի: Առաջին մասում նկարագրված են հիվանդությունները և դրված են դեղատոմսեր լատիներեն լեզվով, բայց հայերեն տառերով, իսկ երկրորդ մասը դեղերի բառարանն է [Գևորգյան, 1954, 39]: Նույն թվականին լույս է տեսել նաև Ֆենելոնի «Տելեմաք»-ը: Այն լույս է տեսել երկու հատորով: Երկրորդ հատորի վերջում կցված է հիշատակարան՝ հնդկահայերի նվիրատվության, Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի օծման, Արղությանի՝ 1793 թվականին դեպի Պետերբուրգ կատարած ճանապարհորդության, այնտեղ կայսրուհու կողմից ընդունվելու և ականակնու ադամանդյա խաչով և մանթիով պարգևատրվելու, Ղրիմ ճանապարհորդելու և այլ հետաքրքիր դեպքերի մասին:

1794 թվականին տպագրվում են երկու գրքեր՝ «Խորհրդատետր սրբազան պատարագի», որի երկրորդ մասը վերնագրված է «Գիրք աղօթից», և «Տետրակ համառօտ բառարանի»: Տետրակի առաջաբանը գրել է Թադեոս վարդապետը: Նրա հիշատակարանում խոսվում է գրքի մեկենասի, ինչպես նաև հնդկահայերի կողմից տպարանին ցույց տրված աջակցության մասին [Նույն տեղում]: 1796 թվականին Արդությանը որոշում է տպարանը տեղափոխել Աստրախան, քանի որ այնտեղ էր նրա մշտական պաշտոնատեղին: Արդությանը կարծում էր, որ մոտիկ լինելով տպարանին, կկարողանա ավելի լավ հետևել տպարանին և այն հաջողության կհասնի: Նույն թվականին տպարանը սկսում է իր բեղուն աշխատանքը և տպագրում է առաջին գիրքը: Աստրախանի տպագրական գործունեության վերաբերյալ ավելի ճիշտ տեղեկություններ կան Թադեոս վարդապետի նամակների մեջ, որոնք ուղղված էին Հովսեփ Արդությանին: Դա կայսրուհի Եկատիրինա Երկրորդի հրովարտակն էր Պարսկաստանին: Գրքույկը տպագրվել է երկու լեզուներով՝ հայերեն և ռուսերեն, և բաղկացած էր 18 էջից: Ըստ Բարխուդարյանի որոնումների ռուսերեն տեքստի համար օգտագործվել է 1792 թվականից Աստրախանում գործող նահանգային տպարանի տառատեսակը: Այս տպագրությամբ է բացատրվում հայ բնակչության հետաքրքրությունը կայսերական հրովարտակի նկատմամբ:

Տպարանը նաև տպագրել է 1796 թվականի ապրիլի 5-ին Ղզլարում մի քարոզի տեքստ առանձին գրքույկով: Այստեղ տեղի հայերը հանդիսավոր մաղթանք են արել՝ նվիրված ռուսական բանակի դեպի Կովկաս ձեռնարկվող նոր արշավանքին [Բարխուդարյան, 1996, 207]:

Քարոզի տպագրությունից 3 ամիս անց՝ օգոստոսին, տպագրվում է «Ժամանակագրություն հասարակաց աղօթից /Ժամագիրք/»: Տպարանի Նոր Նախիջևանյան անվան՝ «Ի տպարանի Սուրբ Խաչ վանիցն»՝ Ս. Խաչ վանք լինելու փոխարեն գրվում է «Ընդ Յովանեալ Սբ. Աստվածածնայ եկեղեցւոյն ի յԱժդարիան» [Ենոքյան, 2018, 107]:

Նույն 1796 թվականին հրատարակվում է ևս մի գրքույկ՝ Հովսեփ Արդությանի «Կոնդակ օրհնութեան»: Բացի կոնդակից՝ գրքույկի մեջ տպագրվում է Արդությանի մի քանի նամակ, որը հասցեագրված էր հայ և ռուս գործիչներին, ինչպես նաև Զուբովի նամակը Հովսեփ Արդությանին:

Հաջորդ տարի տպարանը զբաղված էր երկու գրքերի տպագրական աշխատանքներով: Առաջինը՝ «Սաղմոսի մեկնիչ»-ն էր, որը պարունակում էր 13-րդ դ. հայ հեղինակ Վարդան Բարձրաբերդցու մեկնությունները: Այս տարիներին շատ դժվար է եղել աշխատեցնել տպարանը: Ավելի պարզ երևում է Թադեոս վարդապետի նամակներում: Իր առաջին նամակում Թադեոսը գանգատվում է թղթի պակասությունից և խնդրում է շտապ թուղթ առաքել Հովհաննես Լազարյանի ձեռնարկություններից: Բացի Թադեոս վարդապետից և Սարգսի Խոջենցից՝ տպարանում աշխատում էին մեկական գրաշար, տպագրիչ և կազմարար, նաև մի քանի օգնական ու աշակերտ: Ահա այս դժվարությունների պատճառով էլ «Սաղմոսի մեկնիչ»-ի տպագրությունը ավարտվում է 1798 թ. կեսերին, չնայած գրքի տիտղոսաթերթի վրա նշված է 1797: Երկրորդ գիրքը «Էֆիմերտե»-ն էր, որը պարունակում էր տոմարական զանազան տեղեկություններ, գուշակություններ, երազահան և այլն: Այն նույն դժվարությունների միջով է անցել, ինչպես առաջինը: 1798 թ. կանգ են առնում գրքի տպագրական աշխատանքները և վերսկսվում միայն զարնանը: Վերաբացվելուց հետո տպագրական աշխատանքների բազմաթիվ խնդիրների պատճառով տպարանը փակվում է 1799 թ. օգոստոսին:

Գրքերի տպագրության ուշացմանը խանգարում էր նաև Արդությանի հեռու լինելը: Արքեպ. Արդությանը Պետերբուրգում, կայսերական հրովարտակով, նշանակվել էր գրաքննիչ: Մինչ տպագրության անցնելը, պատրաստի մամուլը ուղարկվում էր Պետերբուրգ Արդությանին՝ գրախոսելու համար [Բարխուդարյան, 1996, 208]:

1797 թ. տպագրվում է նաև «Տարեցոյց և օրացոյց», որը արտապվել է Էջմիածնի տոնացույցից:

Հայկական տպարանի կարևոր խնդիրներից էր տպագրել և պրոպագանդել կառավարական այն միջոցառումները, որոնք ուղղված էին այլ երկրներից հայերին Ռուսաստան ներգրավելուն: 1797-1799 թթ. Պավել 1-ը հայերին վերաբերող մի շարք հրովարտականեր էր տվել: Ահա այդ պատճառով էլ որոշվել էր առանձին հրովարտականների գրքույկ տպագրել: Այն կոչվեց «Թարգմանություն պրիվիլեկացն հայոց», որն էլ հրատարակվեց 1800 թվականի աշնանը [Բարխուդարյան, 1996, 209]:

1. Ժամագիրք, 1796
2. Եկատերինա երկրորդ Հրովարտակ, 1796
3. Յովսեփ Արղությանց Խօսք ասացեալ ի Վերափոխման աստուածածնայ ցեկեղեցիոջն հայոց, 1796
4. Յովսեփ Արղությանց Կոնդակ Օրհնության: Պլատոն Զուբով: Նամակ Արքեպիսկոպոսին, 1796
5. Վարդան Բարձրաբերդցի Մեկնություն Սաղմոսայ Դավթի, 1797
6. Տարեցոյց և օրացույց, 1797
7. Էֆիմէրտէ, 1797-1799
8. Թարգմանութիւն պրիվիլեկացն հայոց, 1800

Գրքույկը լույս է տեսնում այն օրերին, երբ Հովսեփ Արղությանը որպէս կաթողիկոս գտնվում էր Աստրախանում: Հոկտեմբերի 7-ին հայերի իրավունքների և առանձնաշնորհումների վերաբերյալ կառավարական հրովարտակը հանձնելու առթիվ գումարած հատուկ ժողովում Կաթողիկոս Արղությանը հանդես է գալիս ճառով և ջերմ շնորհակալություն է հայտնում ռուսական կառավարությանը: Այդ ելույթի տեքստը ևս հետագայում հրատարակվում է:

Տպարանի գործունեությունը չի սահմանափակվում միայն գրքերի տպագրությամբ և ռուսական կառավարության հրամանագրերի թարգմանությամբ: Տպարանը իր աշխատանքների հետ զուգահեռ կազմակերպում է գրքերի առաքումը Հայաստան և հայկական այլ գաղութներ: Դեռևս 1788 թ., երբ տպարանը գտնվում էր Պետերբուրգում, այնտեղից հարյուրից ավելի գիրք ուղարկվել են այլ գաղութներ:

Տպարանը Աստրախան տեղափոխելուց հետո ավելի մեծացավ տեղի գաղութի դերը հայերեն լեզվով գրականության տարածման գործում: 1797 թվականին հոկտեմբերին Թադեոս վարդապետը տեղեկացնում է Հովսեփ Արղությանին, որ մի մեծ կապոց գիրք է ուղարկում ղզլարցի Գաբրիելի հետ: Կապոցում պարունակում էր 10 օրինակ «Սաղմոսի մեկնիչ», 6 օրինակ «Ժամագիրք», և 100 աղոթքներ «Տերողորմեայք»: 1798 թվականի հուլիսին նա հաղորդում, որ Նոր Նախիջևան է ուղարկել երկու արկղ գիրք և այդ նույն նամակով խնդրում է Կարապետ վարդապետին գրքերը շտապ ուղարկել Կոստանդնուպոլիս:

Թվում էր, թե ամեն բան կարգին է և արդեն տպարանը հունի մեջ է ընկել, աշխատանքները գնում են բնականոն կարգով: 1800 թ. դեկտեմբերին Թադեոս վարդապետը մահացավ, իսկ 1801 թ. մարտին մահացավ Հովսեփ Արղությանը: Այս կորուստները ծանր հետևանք թողեցին տպարանի վրա: Նրանք Ռուսաստանում առաջին հայկական տպարանի ղեկավարներն էին: Նրանց մահից հետո տպարանը չաշխատեց և նրանց մահով վերջ դրվեց Ռուսաստանում առաջին հայկական տպարանի աշխատանքներին:

Աստրախանում տպագրական աշխատանքները դադարում են, բայց ավելի քան 10 տարի անց՝ 1810 թ., Աստրախանի գլխավորապես գերմաներենի ուսուցչի տեղը զբաղեցնելու համար Աստրախան է ժամանում ավստրիացի ֆոն Վեյսբրոնները: Նա որոշում է շաբաթաթերթ տպագրել Աստրախանում երկու լեզվով: 1812 թվականին ձեռք է բերում ռուսական տպարանի սարքավորումներ իսկ հայկականի համար դիմում է կաթոլիկ եկեղեցու երեսփոխան Կղեմես Շահվերդյանին:

Կ. Շահվերդյանը և ֆոն Վեյսբրոնֆենը ցանկանում են Խալդարյանի տպարանի սարքավորումները ձեռք բերել: Նրանք դիմում են հայկական կոնսիստորիայի ղեկավարությանը և մերժվում են: Իրական պատճառը այն էր, որ հայկական եկեղեցին բացասական վերբերմունք ուներ ճիզվիտների նկատմամբ: Նրանք ակտիվ ձևով հայերի մեջ տարածում էին կաթոլիկություն: Ահա սա էր պատճառ դառնում, որ շաբաթաթերթի՝ «Արևելյան ծանուցմունք»-ի, սկզբնական հրատարակությունները ռուսերենով էին՝ «Վաստոչնիե իզվեստիա», որի առաջին համարը եղավ 1813 թ. հունվարի 29-ին:

Այսպիսով Երկայնաբազուկ Արքեպիսկոպոս, Կաթողիկոս Արդուրյանի մահը վերջ դրեց Խալդարյանի տպարանի աշխատանքներին (1801 թ. մարտ):

Արքեպիսկոպոսի մահվանից հետո մի նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ երջանկահիշատակ Արդուրյանը ցանկանում էր իր տպարանում տպել հայերեն Աստվածաշունչ շքեղ և պատկերազարդ, որի համար էլ փորագրել էր տվել պղնձի վրա մի քանի հարյուր պատկեր, խոշոր ծախսեր անելով դրա համար, սակայն Հնդկաստանից սպասվող գումարների ուշացման պատճառով այդ ցանկությունն անկատար մնաց: Բացի դրանից Հովսեփ արքեպիսկոպոսը եկավ Կովկաս և՛ տպարանը փակվեց, և՛ կորստի մատնվեցին այդ բոլոր երազանքները:

Արդուրյան Արքեպիսկոպոսի համար տպագրությունն իր ժողովրդի փրկությունն էր: Ահա թե ինչու էր Արդուրյանը գիշեր ու ցերեկ նվիրված աշխատում տպարանի ծաղկեցման համար: Նա աշխատում էր վերացնել անգամ չնչին տեխնիկական թերությունները: Արքեպիսկոպոսը մեծ նվիրումով էր աշխատում: Ահա այսպիսին էր Արդուրյան արքեպիսկոպոսի վերաբերմունքը դեպի տպագրական գործը:

Խալդարյանի տպարանը սկզբից ևեթ հայ ժողովրդի համար ծառայել է հոգևոր պահանջների համար: Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայերն ունեցել են հոգևոր սնունդի կարիք: Ցանկացած տարածքում գտնվելով՝ նրանք պայքարել են առաքելական եկեղեցի ունենալու համար: Ռուսաստանում այդ գործի հոգևոր առաջնորդն էր մեզ հայտնի արքեպիսկոպոս Արդուրյանը:

Խալդարյանցի տպարանի շուրջ քսանամյա գոյության և արդյունավետ աշխատանքին ծանոթանալով ակներև է դառնում, որ նրա գործունեությունը Հովսեփ Արդուրյանը ծառայեցրեց ազգի հանրագուտ շահերին, ինչպիսի բաղձանք ուներ նա:

Արդուրյանի համար տպագրությունը միջոց էր ռուսահայերին կապելու հայոց եկեղեցուն, բարձրացնելու նրանց ազատագրական ոգին, ձևավորելու աշխարհայացքը:

Արդուրյանը տպարանի գործունեությունը ծառայեցրել է ազգի հանրային շահերին և ազատագրական շարժման նպատակներին: Հատուկ ընտրվում և հրապարակում էր գրքեր, որոնցում դրվատվում էր Հայաստանի անցյալն ու սերմանվում հայրենի երկիրը ազատագրելու գաղափարը: Տպագրված գրքերը տարածում էր Ռուսաստանի և օտար երկրների հայաշատ գաղութներում, նաև՝ Հայաստանում: Նա իր ներդրումը ունեցավ նաև հայ ազատագրական շարժման մեջ:

Հայ տպագիր գիրքը, այդ թվում նաև ռուսահայ տպագրությունը եղել է հայության ինքնահաստատման և գոյատևելու ձգտման արտահայտությունը: Այն իր ինքնատիպ դիմագծով պատվավոր տեղ է զբաղեցնում հայ մշակույթի գանձարանում:

Արդուրյանն ուժ ու եռանդ չէր խնայում տպարան ունենալու համար, որպեսզի այն ծառայեցներ լուսավորության գործին և դրանով լուծեր հիմնադրվելիք դպրոցներին դասագրքերով ապահովելու խնդիրը: Տպարանին անհրաժեշտ էր նաև հայերին սովորեցնելու ռուսերեն լեզուն, որն առօրյա կյանքում անհրաժեշտ էր լինելու:

Արդուրյանի նպատակն էր գրքի միջոցով հայությանը հաղորդակից դարձնել ժամանակին հուզող հարցերին: Այդ նպատակով էր նա ծավալել տպագրական գործունեությունը. նա ջանում էր տպագրված գրքերը տարածել Հայաստանում, Ռուսաստանի և օտար երկրների

հայաշատ գաղութներում: Նա սերտ կապեր էր պահում նաև Անդրկովկասի, Պոլսի և Հնդկաստանի հայկական գաղութների հետ, ուր նույնպես գրքեր էին առաքվում: Հայերեն գրքեր էին առաքվում ու իրացվում հնդկահայ գաղութներում: Դրան մասնավորապես նպաստում էր ազատագրական շարժման ու մշակույթի հարցերում Հ.Արղությանի և Շ.Շահամիրյանի միջև ստեղծված գործարար կապերը, ինչպես նաև հնդկահայ մեծահարուստների կատարած նվիրատվությունները: Լինելով հայրենասեր և ազգանվեր անձնավորություն նա հետևողական էր իր ձեռնարկած յուրաքանչյուր գործի նկատմամբ: Նրա նպատակը վեհ էր այդ պատճառով էլ անկախ ամեն դժվարության, հաջողություն ունեցավ:

SUMMARY

The first Armenian printing house in Russia was founded in 1780 by Grigor Khaldaryants, who moved it from London to St. Petersburg. After the death of Khaldaryants, in 1789, Hovsep Arghutyan, the spiritual leader of the Armenians of Russia, moved the printing house to New Nakhichevan, and in 1796, to Astrakhan. During its existence, the printing house published about forty-five books on religious, educational, and historical topics.

Getting acquainted with the twenty-year existence and effective work of the Khaldaryants printing house, it becomes obvious that his activity served Hovsep Arghutyan for the common interests of the nation, which he had a desire for. In the 18th century, one of the leaders of the Armenian diocese in Russia, Archbishop Hovsep Arghutyun, being in a foreign country, Hovsep Arghutyun, a representative of a stateless country, with his education and enlightened ideas, was able to unite the Armenian people and make them presentable. Printing was a way to connect Russian-Armenians to the Armenian Church, raise their liberating spirit, and shape their worldview.

The Armenian printed book, including Russian-Armenian printing, was the expression of Armenian self-assertion and striving for survival. It occupies an honorable place in Armenian culture with its unique face.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բարխուդարյան Վ. Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (18-րդ դ. կես 20-րդ դ. սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 420 էջ:
2. Բարխուդարյան Վ. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, 498 էջ:
3. Բարխուդարյան Վ. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն / 1861-1917/ Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985, 499 էջ:
4. Բարխուդարյան Վ. Ռուսահայերի առաջին տպարանը // Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, № 4., էջ 220-229:
5. Գևորգյան Պ. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայ տպագրության գործը Ռուսաստանում 18-րդ դարում // Էջմիածին, Վաղարշապատ, Ամենայն Հայոց կաթողիկոսություն, 1954, № 11, էջ 45-49:
6. Ենոքյան Ա. Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները և դրանց նկարագրական առանձնահատկությունները: «Տպագրության Մարգարիտ» միջազգային գիտաժողով (19 սեպտեմբեր, 2017) նյութերից // Բանբեր 25, Երևան, ԵՊՀ, 2018, էջ 101-121:
7. Լևոնյան Գ. Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, Հայաստան, 1958, 253 էջ:
8. Հայկական Սովետական հանրագիտարան, 4-րդ հատոր, Երևան, ՀՍՀ, 1978, 720 էջ:
9. Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՌԻԳԸ հիմնադրամ 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Հատոր 4, Հասարակական գիտություններ: Պատմություն, Փիլիսոփայություն, հոգեբանություն, արևելագիտություն, մի-

ջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, աստվածաբանություն / ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերություն, Երևան, ԵՊՀ, 2013, 392 էջ:

10. Ղազարյան Ռ. Հայ գրքի նշանավոր տպարանները և հայ պարբերականները եվրոպական և այլ երկրներում // Հոգևոր հայրենիք, 20 նոյեմբեր, Երևան, Գիրք, 2005, հոկտեմբեր, էջ 2; նոյեմբեր, էջ 3: